ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1], 77[2], և 77[3] հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Անտառամեջ համայնքի ղեկավարին՝

1) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը համաձայն Հայաստանի Հանրապետության <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի պահանջների ենթակա են պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման.
2) ընդունվող իրավական ակտերը համապատասխանեցնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ, 40-րդ և 41-րդ հոդվածների պահանջներին.
3) իրավական ակտերի նախաբանում կամ բովանդակության մեջ (որոշումներ, կարգադրություններ) նշել որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում տվյալ իրավական ակտը.
4) իրավական ակտերում կատարվող փոփոխությունները, լրացումները, գործողության դադարեցումը, ուժը կորցրած ճանաչելը կամ չեղյալ համարելը իրականացնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ, 71-րդ, 72-րդ և 75-րդ հոդվածների դրույթներով.
5) պահպանել համայնքի ավագանու նիստերի գումարման պարբերականությունը, այն է՝ ոչ ուշ քան երկու ամիսը մեկ անգամ.
6) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ մրցութային եղանակով, համալրել աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-1/ թափուր պաշտոնը.
7) ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> ենթակետի դրույթով, աշխատակազմի քարտուղարին շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան.
8) համայնքային ծառայողների անձնական գործերը վարել համաձայն Հայաստանի Հանրապետության ՏԿՆ 2006թ. նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով հաստատված կարգի և պահանջների.
9) աշխատակազմի քարտուղարի անձնական գործերում տեղակայել նրա կողմից ՏՀՏ տրված գույքի և հայտարարագրերի հայտարարագրման մասին տեղեկանքը, դրա բացակայությունը հանդիսանում է պաշտոնից ազատման հիմք.
10) հաշվապահական հաշվառումն իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, ճշտել սոցվճարների հաշվարկները, փոխադարձ ստուգում կատարել հարկային մարմնի հետ.

11) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հուլիսի 25-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ